

**ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյանի շնորհավորական ուղերձը  
Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ**

Թանկագին հայուհիներ, շնորհավորում եմ ձեզ՝ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ: Հիմքում ունենալով ապրիլի 7-ին Յայ Առաքելական Եկեղեցու կողմից նշվող Ս.Մարիամ Աստվածածնի Ավետման տոնի խորհուրդը, այդ օրը մեր երկրի տոնացույցում հռչակվել է որպես Մայրության եւ գեղեցկության օր:

Բոլորիս համար սրբազնագույն այս տոնը լավագույն առիթ է մեր սերն ու երախտիքը արտահայտելու հանդեպ մայրերը եւ մայրության բերկրանքին սպասող հարսիկները: Թո՛ղ որ մայրական երջանկությունը պարուրի ձեզ, թո՛ղ որ վայելեք բնություննից ձեզ շնորհված մեծագույն առաքելության՝ մայրության բերկրանքը:

Բնության զարթոնքի ու արթնացման պահին նշվող Մայրության տոնն ինքնին գեղեցկություն է: Ահա թե ինչու, տոնն իր մեջ մեկտեղել է մայրությունն ու գեղեցկությունը:

Սիրելի՛ մայրեր, քույրեր, տիկնայք եւ դուստրեր, կրկին շնորհավորում եմ ձեզ, մաղթում եմ նորանոր հաջողություններ: Շարունակեք գեղեցկացնել կյանքը ձեր հրաշալի ներկայությամբ, ձեր քնքշությամբ, հմայքով եւ լավատեսությամբ: Թող որ խաղաղություն տիրի Հայոց աշխարհում, թող անդորր լինեն մեր երկրի սահմանները եւ կապույտ երկնակամարի տակ վայելեք ձեր զավակների երջանկությունը:

**Հարգանքով՝ ՀՀ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզալյան**